

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական

աշխատանք

*Թեմա՝ Մաթեմատիկայի նկատմամբ սովորողների
մոտիվացիայի զարգացումը*

Առարկա՝ Մաթեմատիկա

Ուսուցիչ՝ Վալենտինա Գասպարյան

Դպրոց՝ Ն. Զարյանի անվան թիվ 130 հիմնական

Ղեկավար՝ Քրիստինե Պետրոսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Հետազոտության ընտրանքը	5
Կարողունականության զգացում	13
Դասավանդման իմ փորձից	15
Հետազոտման մեթոդները, կազմակերպումն ու ընթացքը.....	18
Հետազոտական արդյունքի վերլուծություն	18
Եզրակացություն	21
Օգտագործված գրականություն	23

Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է սովորողների կողմից ինքնուրույն մաթեմատիկական գիտելիքների և ուսումնական, ճանաչողական հետաքրքրությունների հանդեպ մոտիվացիայի ներկայիս վիճակի գնահատման, զարգացման հետ:

Հետազոտության օբյեկտն է՝ աշակերտների մոտ **մաթեմատիկայի նկատմամբ** շարժառիթների ուսումնասիրությունը:

Հետազոտության առարկան է՝ շարժառիթների ազդեցությունը ուսումնական գործընթացում:

Հետազոտության նպատակն է բացահայտել սովորողների ուսումնական գործունեության վրա ազդող շարժառիթների տեսակները:

Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները** .

1. ուսումնասիրել ուսումնական գործունեության վերաբերյալ մասնագիտական գրականություն,
2. վերլուծել ուսումնական գործունեության և մաթեմատիկայի նկատմամբ շարժառիթների հիմնական տեսական մոտեցումները,
3. ուսումնասիրել ուսումնական գործունեության հիմնախնդիրները,
4. վերլուծել ուսումնական շարժառիթների մեխանիզմները,
5. պարզել պատանեկության տարիքում ուսումնական գործընթացում շարժառիթների ազդեցությունը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ սովորողների մաթեմատիկայի նկատմամբ ուսումնական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է շարժառիթի տեսակով:

Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքերը. Աշխատանքի տեսական հիմք են հանդիսացել պատանեկության տարիքի և ուսումնական շարժառիթների վերաբերյալ Դ.Էլկոնինի, Ն.Լեյտեսի, Տ.Ա.Իլյինայի, Ա և այլոց հետազոտությունները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության իրականացման և մեր առջև դրված խնդիրների լուծման համար մշակվել են և կիրառել ենք մեթոդներն ու մեթոդիկաները.

1. Դիտում
2. Էլերսի «Ուսումնական գործունեությանը միտված անձի ախտորոշում» մեթոդը
3. Էլերսի «Անհաջողություններից խուսափման մոտիվացիա»
4. Լեպեշեվոյի «Ուսումնական մոտիվացիայի տեսակի ախտորոշում»
5. Բոժովիչի և Մարկովի «Դրդապատճառների աստիճան» մեթոդիկան

Հետազոտության տեսական նշանակությունը: Մեր կողմից ուսումնասիրվող թեմայի տեսական նշանակությունը կայանում է աշակերտների շարժառիթների տեսակների խնդրի հետազոտության ընդհանրացման և համակարգման մեջ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ստացված արդյունքները կարող են կիրառվել հոգեբանա-մանկավարժական միջոցների, ձևերի, մեթոդների մշակման համար, որոնք անհրաժեշտ են մաթեմատիկայի նկատմամբ աշակերտների ուսումնական մոտիվացիայի բարձրացման համար:

Հետազոտության տեսագործնական նշանակությունը: Հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս ընդլայնելու ինչպես սովորողների մաթեմատիկայի նկատմամբ շարժառիթների և ուսումնական գործունեության արդյունավետության վերաբերյալ տեսական պատկերացումները, այնպես էլ գործնականում հիմնվելով այդ տեսական դրույթների վրա առավելագույնս արդյունավետ կերպով խթանել սովորողների մաթեմատիկայի նկատմամբ մոտիվացիայի առաջացմանը ուսումնական գործունեության ընթացքում:

Հետազոտության ընտրանքը:

Հետազոտությունն իրականացրել ենք 60 սովորողի հետ՝ 30 աղջիկ, 30 տղա: Հետազոտությունն իրականացրել ենք երկու փուլով: Առաջին փուլը՝ հետազոտության նախապատրաստում և անցկացում, երկրորդ փուլը՝ հետազոտության տվյալների:

Այսպիսով, հարկ է նշել, որ հետաքրքիր խնդիրների ճիշտ և հաջող ընտրությունն անգնահատելի կրթական արժեք ունի սովորողների շրջանում մաթեմատիկայի նկատմամբ կայուն հետաքրքրության ձևավորման գործում: Այս առումով ինտերակտիվ առաջադրանքները անգնահատելի են: Օրինակ, ավելի վաղ, հանրահաշվի դասընթացում երկրաչափական պրոգրեսիայի առաջին n անդամների գումարի բանաձևի ստացման դասի ներածությունը տրվել է շախմատի ստեղծման մասին հայտնի պատմության միջոցով և ամրապնդվել է հետևյալ ինտերակտիվ խնդիրը լուծելով. Ինչպես ծալել թուղթը 40 անգամ: «Օրինակ՝ 0,4 մմ հաստությամբ A4 թուղթը մեկ անգամ ծալում ենք, կտրում ենք ծալքի մոտ և վերցնում 4 էջանոց նոթատետր, որի հաստությունը բնականաբար կլինի 0,8 մմ: Այնուհետև մենք նորից կրկնում ենք այս գործողությունը: Կստանանք 4 թերթ՝ յուրաքանչյուրը 8 էջից, ստացված նոթատետրի հաստությունը կլինի 1,6 մմ:

Ի՞նչ էք կարծում, եթե յուրաքանչյուր թուղթը հաջորդաբար ծալենք ու կտրենք այդ ծալվածքով 40 անգամ, ապա ստացված տետրի հաստությունը կարո՞ղ է հասնել Երկրից մինչև Լուսին» (Ջոն Բերի, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր):

Սովորողների մոտ մաթեմատիկայի նկատմամբ կայուն հետաքրքրություններ ձևավորելու և դաստիարակելու համար անհրաժեշտ է, որ նրանք նախ և առաջ ճիշտ հասկանան մաթեմատիկական փաստերը: Օրինակ՝ ճիշտ չէ 7-րդ դասարանի երկրաչափության դասընթացը միանգամից սկսել այն պնդումներից, որ կետը չափսեր չունի, զիծը հաստություն չունի և այլն: Անհրաժեշտ է սովորողների հետ կատարել որոշակի նախապատրաստական աշխատանք առ այն, որ կետի, ուղղի և շատ ուրիշ մաթեմատիկական հասկացություններին մարդիկ հանգել են պրակտիկ

առարկայական գործունեության արդյունքում: Օրինակ՝ բնության մեջ երկարությունների չափման ժամանակ մարդիկ աստիճանաբար համոզվել են, որ թելի կամ պարանի հաստությունը, որի օգնությամբ չափում ենք երկարությունները, նշանակություն չունի, որտեղից էլ պարզ վերացարկմամբ մարդը հանգել է հաստություն չունեցող ուղղի գաղափարին:

Հողաչափության ժամանակ հողի մեջ մտցրած սեպը ցույց է տալիս, թե որտեղից է սկսվել երկարության հաշվարկը: Շինարար վարպետները շատ լավ գիտեն՝ որքան բարակ լինի այդ սեպը, այնքան ճշգրիտ կլինի չափման արդյունքը: Օգտակար կլինի 7-րդ դասարանի սովորողներին պատմել, թե ինչպես է առաջացել և զարգացել երկրաչափությունը Եգիպտոսում, Բաբելոնում, Ասորեստանում և Հայաստանում: Շատ կարևոր է նաև պարզել, թե ինչպես են սովորողները վերաբերվում ընդհանուր մաթեմատիկական պնդումներին՝ թեորեմներին և կոնկրետ պնդումներին:

Հատկանշական է, որ մինչ ուսումնական գործունեության շարժառիթի ձևավորման ներկայացնելը, խնդիրը լավ հասկանալու համար նպատակահարմար է համաձայնեցնել «մոտիվ» և «մոտիվացիա» տերմինների միանշանակությունը, թեև հոգեբանության մեջ հանդիպում են այս հասկացությունների տարբեր սահմանումներ:

Այսպիսով՝ ի՞նչ է «մոտիվ»: Մոտիվն այն է, ինչը մղում է գործունեության/ համարվում է հնարավորությունների դրսևորման ձևը/:

Ի՞նչ է շարժառիթը («մոտիվացիա»): Շարժառիթը իրեն և ուրիշներին գործունեության մղելու գործընթացն է՝ անձնական նպատակների հասնելու համար:

Ցանկացած ուսուցիչ ուզում է, որ իր սովորողները լավ սովորեն, դպրոցում հետաքրքրությամբ և ցանկությամբ սովորեն: Սրանով հետաքրքրված են նաև սովորողների ծնողները: Բայց երբեմն և՛ ուսուցիչները, և՛ ծնողները ավստասանքով նշում են. «չեն ուզում սովորել», «կարող է լավ զբաղվել, բայց չի ուզում»: Այս դեպքերում մենք հանդիպում ենք այն փաստի հետ, որ սովորողի մոտ ձևավորված չեն գիտելիքների հնարավորություններ, չկա հետաքրքրություն ուսուցման հանդեպ:

Ո՞րն է գիտելիքի էության անհրաժեշտությունը: Ինչպե՞ս է այն առաջանում: Ինչպե՞ս է այն զարգանում: Ինչպիսի՞ մանկավարժական միջոցներ կարելի է օգտագործել սովորողների գիտելիքներ ստանալու մոտիվացիայի ձևավորման համար: Այս հարցերն անհանգստացնում են բազմաթիվ մանկավարժների և ծնողների:

Ուսուցիչները գիտեն, որ դպրոցականին չի կարելի ուսուցանել, եթե նա ուսուցմանը և գիտելիքին անտարբերությամբ է վերաբերվում, առանց հետաքրքրության, չգիտակցելով դրա անհրաժեշտությունը: Այդ պատճառով դպրոցի առաջ խնդիր է դրված՝ զարգացնել և ձևավորել ուսումնական գործունեության դրական մոտիվացիա:

Նրա համար, որպեսզի սովորողներն իսկապես ներգրավվեն աշխատանքի մեջ, անհրաժեշտ է, որպեսզի խնդիրները, որոնք ուսումնական գործունեության ընթացքում դրվել են նրանց առջև, հասկանալի լինեն և ընդունված, այսինքն, որպեսզի նրանք նշանակություն ունենան սովորողների համար:

Արդեն կրտսեր դպրոցում ուսուցիչների համար մեծ խնդիր է դառնում կրթական մոտիվացիան: Սովորողները անհանգիստ են, աղմկոտ, չեն հետևում ուսուցչի խոսքերին, բավական ջանք չեն գործադրում դասերն ու տնային աշխատանքները կատարելու համար, փորձում են ամեն գնով լավ գնահատական ստանալ կամ, ընդհակառակը, ցուցաբերում են կատարյալ անտարբերություն: Որքան մեծանում է սովորողը, այնքան ավելի շատ խնդիրներ է ունենում սովորել չցանկանալու հետ: Ստանդարտ մեթոդը անտարբեր և վատ առաջադիմություն ունեցող սովորողների ուսումնական գործունեությունը խթանելն է:

Ուսուցման ցիկը գործընթաց է, որը նախաձեռնում, ուղղորդում և պահպանում է ջանքերը ուսումնական գործունեության իրականացման համար: Այն բարդ համակարգ է, որը ձևավորվում է սովորողների մոտիվացիաների, նպատակների, արձագանքների, համառության և վերաբերմունքի հիման վրա:

Անհրաժեշտ է տարբերակել շարժառիթ և նպատակ հասկացությունները: Նպատակը կանխատեսելի արդյունք է, որը ներկայացվում և գիտակցվում է մարդու

կողմից: Շարժառիթը նպատակին հասնելու ձգտումն է: Տարբերակում են հասկանալի և իրականում գործող շարժառիթներ: Սովորողը հասկանում է, թե ինչու է անհրաժեշտ սովորել, բայց դա դեռևս նրան չի դրդում զբաղվել ուսումնական գործունեությամբ: Կոնկրետ պայմաններում հասկանալի շարժառիթները դառնում են իրապես իրագործելի: Օրինակ՝ առաջին դասարանցին ամեն կերպ փորձում է ուշացնել տնային աշխատանքի պատրաստումը: Նա գիտի, որ պետք է պատրաստի տնային աշխատանքը, այլապես կհիասթափեցնի ծնողներին, վատ գնահատական կստանա, գիտի, որ սովորելն իր պարտականությունն է և այլն: Բայց այս ամենը կարող է բավարար չլինել, որպեսզի սովորողը պատրաստի իր տնային աշխատանքը:

Հիմա ենթադրենք, որ նրան ասում են՝ դու չես գնա խաղալու, մինչև չպատրաստես քո տնային աշխատանքը: Նման դիտողությունը կարող է աշխատել, և նա կկատարի գործը: Սովորողի մտքում, իհարկե, այլ դրդապատճառներ կան (լավ գնահատական ստանալը, պարտականությունը կատարելը), բայց դրանք միայն հասկանալի դրդապատճառներ են: Դրանք հոգեբանորեն անարդյունավետ են նրա համար, իսկ ընդհանրապես զբոսանքի գնալու մոտիվացիան ակտիվանում է: Ի վերջո, այս շարժառիթը բավարարելու շնորհիվ/երեխան պետք է դասերը լավ սովորի/ նա բարձր գնահատական է ստացել: Կանցնի որոշ ժամանակ, և երեխան ինքը կնստի դասերը պատրաստելու սեփական նախաձեռնությամբ: Առաջանում է նոր գործող շարժառիթ. Նա դասերը պատրաստում է, որպեսզի ստանա լավ գնահատական, այժմ առաջադրանքները պատրաստելու միտքը դա է: Իրականում գիտելիքը, որը սովորողը ստանում է դպրոցում, նրա համար միայն կարող են լինել այլ նպատակների հասնելու միջոցներ/ստանալ ատեստատ, խուսափել պատժից, արժանանալ գովասանքի և այլն/: Այս դեպքում ոչ թե սովորողը ցուցաբերում է հետաքրքրասիրություն, կոնսկրետ գիտելիքների տիրապետելու կարողություններ, գիտելիքների ընդլայնում, այլ այն, ինչ ստացվում է սովորելու ընթացքում: Ընդգծվում են շարժառիթների մի քանի տիպեր, որոնք կապված են ուսուցման արդյունքի հետ:

- Շարժառիթ, որը պայմանականորեն կարելի է անվանել բացասական: Այն ենթադրում է որոշ անհաջողություններ և անհանգստություն, որոնք կարող են առաջանալ, եթե նա չսովորի /ճնողների, ուսուցիչների, համադասարանցիների կողմից նախատինքր/: Այսպիսի շարժառիթը չի բերում հաջող արդյունքների:
- Շարժառիթ, որն ունի դրական բնույթ, այս շարժառիթը հանդես է գալիս 2 ձևով: Իմանալով շարժառիթի տիպը, ուսուցիչը կարող է պայմաններ ստեղծել դրական շարժառիթի ամրապնդման համար: Եթե այդ շարժառիթը կապված է ուսուցման արդյունքի հետ, ապա այն պահպանելու պայմանները կարող են լինել խրախուսանքը, ապագայում ձեռք բերվող գիտելիքների օգտակարության ցույց տալը, դրական հասարակական կարծիք ստեղծելը և այլն: Եթե այդ շարժառիթը կապված է ուսուցման նպատակի հետ, ապա նրա պահպանման համար պայմանները կարող են լինել ձեռք բերված արդյունքների մասին ինֆորմացիան, ճանաչողական հետաքրքրությունների արթնացումը և ձևավորումը, պրոբլեմային մեթոդիկան: Շարժառիթը պահպանելու համար՝ կապված ուսուցման գործընթացի հետ, կարևոր են ուսումնական գործընթացի աշխույժ և հետաքրքրիչ կազմակերպումը, սովորողների ակտիվությունը և ինքնուրույնությունը, հետազոտական մեթոդիկան, նրանց հնարավորությունների դրսևորման համար պայմանների ստեղծումը:

Անուղղակիորեն, ուսումնական շարժառիթը վկայում է ուսումնական գործընթացի իրական հաջողության մասին: Սրանց մեջ են մտնում դպրոցական առաջադրանքների կատարման սովորական ցուցանիշները, և ամենակարևորը՝ դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման ցուցանիշները:

Ուսուցման ընթացքում փոխվում է մոտիվացիայի տեսակը. Մոտիվացիայի փոփոխությունները ազդում են տարբեր պատճառներով: Սովորողի նոր մոտեցումներ

/օրինակ՝ դժվարությունները հաղթահարելու կամ շրջանցելու ցանկություն/, կրթական առաջադրանքներում երկարաժամկետ հաջողություն կամ ձախողում, կյանքի ուղու ընտրություն և այլն:

Մի շարք հոգեբաններ և ուսուցիչներ մեծ նշանակություն են տալիս ներքին դրդապատճառների /փորձ, վարպետություն, գիտելիքներ, հմտություններ և կարողունակություններ ձեռք բերելու ցանկություն/ ուսումնասիրությանը և ձևավորմանը: Ճանաչողական հետաքրքրությունը ուժեղ ներքին դրդապատճառ է և, ինչպես սովորելու մոտիվացիան, իր բնույթով անշահախնդիր է:

Իմացական հետաքրքրության ձևավորման համար մեծ նշանակություն ունի նաև ուսումնական գործունեությունը:

Ուսումնական շարժառիթների 3 կետերն են.

1. Գիտելիքների որոնման գործընթացում ինքնուրույնության զգացողությունը,
2. ազատ ընտրության զգացումը,
3. հաջողության /կումպետենտության / զգացումը:

Որոնման ժամանակ ինքնուրույնության զգացում.

<<Մենք դա հասկացանք, իմացանք, մտածեցինք միասին>>

Թերևս, ուսումնական շարժառիթի գլխավոր աղբյուրը համարվում է ուսումնական գործընթացում ակտիվ սուբյեկտ լինելը, որից, առաջին հերթին, կախված է արդյունքը: Դրան նպաստում են նյութի խնդրահարույց մատուցումը, խմբային մտազրոհը և երեխաների հետազոտական գործունեությունը: Նրանք երեխային հիանալի հնարավորություն են տալիս ակտիվորեն մասնակցել գիտելիքների ձեռքբերման գործընթացին, այլ ոչ թե լինել պասիվ:

Տեխնիկա <<պրոբլեմային հարցեր>>

Կարելի է սկսել նրանից, որ նոր նյութի հետ ծանոթացման / և նաև հարցման ժամանակ/ առաջադրել ոչ թե այն հարցերը, որոնք պահանջում են հիշողության լարում/օրինակ՝ <<որ թվականին>>, <<ով է հորինել>>/ այլ հարցեր, որոնք պահանջում են վերլուծություն, համեմատություն, համադրություն, բովանդակային տեղեկատվության բացատրություն և համապատասխանաբար, նյութի ավելի խորը հասկացում և նրա հանդեպ հետաքրքրություն: Այսպիսի հարցեր ուղղելու կարողությունը հմտություն է, որը կարելի է և անհրաժեշտ է սովորել:

Ամերիկացի հոգեբան Ա.Քինգը մտածել է մի շարք ընդհանուր հարցեր, որոնք կարող են կիրառվել տարբեր ուսումնական իրավիճակներում. Ինչ կպատահի, եթե....., բերեք օրինակ,....., որո՞նք են ուժեղ և թույլ կողմերը..., ինչո՞վ են նման,....., արդեն ի՞նչ գիտենք-ի մասին, ինչո՞վ են նման և, այսպիսով՝ազդում է, ո՞րն է համարվում լավագույնը և ինչո՞ւ:

Երբ այսպիսի հարցերն են ընկած ուսումնական գործընթացի հիմքում, ապա երեխան սկսում է հասկանալ ուսուցման ճշմարիտ նպատակը՝ սովորում է մտածել, կիրառել գիտելիքը գործնականում, կողմնորոշվել կյանքի իրավիճակներում:

Միննույն ժամանակ անհրաժեշտ է խուսափել աշակերտների տարբեր տեսակի սխալ պատասխաններից. <<մենք չենք կործում/մտածում,...>>: Քննադատությունը կասկածի տակ է դնում երեխայի կոմպետենտությունը և նրան ստիպում դադարեցնել ջանքերն այդ ուղղությամբ: Նման տեսակները վնաս են հասցնում և՛ շարժառիթին, և՛ մտածողության զարգացմանը:

Պետք է ևս մեկ անգամ շեշտել, որ յուրաքանչյուր ոք ունի սխալվելու իրավունք: Դպրոցական տարիքում օգտակար է խոսել ձեր սխալների մասին: Երեխաները կտեսնեն, որ իրենք և ուսուցիչը բարիկաղի հակառակ կողմերում չեն, նրանք շատ ընդհանրություններ ունեն: Կարևոր է խրախուսել երեխաներին հարցեր տալ: «Արա՛, լավ հարց տվեցիր, նշանակում է՝ մտածում ես, հետևում ես մտածողության գործընթացին»:

Հատկապես պետք է գովել լավ հարցերի համար, որոնք արտացոլում են շատ բան մտածելու և իմանալու ցանկությունը: Թե ինչպես է առաջացել գիտելիքը, կարելի է պատմել այնպես, որ ուսանողն իրեն զգա որպես նոր գիտելիքի առաջացման մասնակից:

Ուսումնական շարժառիթների բարձրացման արդյունավետ միջոց է համարվում սովորողին սովորեցնել ռեֆլեքսիայի վերածել այն, ինչը ինքը գիտի և ինչ է ուզում իմանալ: Այս տեխնիկան կոչվում է «Գիտեմ-չգիտեմ-ուզում եմ իմանալ» Սա նույնպես նպաստում է հասկանալու, թե ուր է շարժվում ուսումնական գործընթացում, սովորում է նպատակադրմանն ու պլանավորմանը: Նոր նյութի բացատրման ժամանակ երեխաներին կարելի է առաջարկել օգտագործել հետևյալ աղյուսակը, կախված տվյալ ինֆորմացիայից.

	+	-	?
Ես գիտեի	Սա ինձ համար բացառապես նոր էր	Սա հակասում է նրան, ինչը ես գիտեի	Ես ուզում եմ սրա մասին իմանալ ավելին

Երեխաների առջև պրոբլեմային հարցեր դնելու և պատասխանը միասին փնտրելու դեպքում կարելի է սովորեցնել ինքնուրույն տեքստի համար հարցեր որոշել. բնագիտական, պատմական, գեղարվեստական: Այսպիսով՝ մենք նույնպես աջակցում ենք երեխաների ճանաչողական շարժառիթին, և երեխան հասկանում է, որ կարևոր է ոչ միայն ինքը՝ գիտելիքը, այլև նրան հասնելու կարողությունը, բոլոր հնարավոր ԻՆՉՈՒ-ները:

Ազատ ընտրության զգացողություն. <<Մենք կարող ենք ընտրել>>

-Ինչու՞ ես գնում դպրոց:

Հարցը բավական հռետորական է /գրեթե անիմաստ/, քանի որ ժամանակակից երեխաների մեծ մասը արագ հասկանում են, որ չունեն այլ ընտրություն, գնալ կամ չգնալ, դպրոցում լինել նրանք պարտավոր են: Եվ դա «ես պարտավոր» եմ, այլ ընտրություն չունեմ»» զգացումն է, որն ունակ է սպանել ցանկացած ցանկություն: /Դժվար է ցանկանալ այն, ինչ պարտավոր ես անել/: Չէ՞ որ ազատ զգալու անհրաժեշտությունը, կյանքի ընթացքը ինքնուրույն որոշելը՝ հոգեբանորեն հիմնական կարիք է, և ոչ ոքի դուր չի գալիս ընտրության բացակայությունը և պարտադրված լուծումները, հատկապես երեխաներին/:

Բայց ազատության զգացման անհրաժեշտությունը կարելի է հասնել: Ուսուցիչը, ով ցանկանում է բարձրացնել դասարանի ուսումնառության մոտիվացիան, պետք է լավ գիտակցի, որ որքան քիչ օգտագործի «պետք է, պետք է» արտահայտությունները, այնքան երեխաները կհետաքրքրվեն ուսուցման գործընթացով և կմեծանան նրանց նախաձեռնողականությունն ու ակտիվությունը: Այսինքն՝ որքան քիչ վերահսկողություն, պարտադրանք և ավելի շատ ազատություն ու ինքնավարություն, այնքան լավ: Ինքներդ որոշեք, թե ինչ նյութի օգնությամբ, ինչպես հնարավորություն տալ աշակերտին ճիշտ ընտրություն կատարել՝ ռեֆերատների, պրեզենտացիաների, զեկուցումների, բանաստեղծությունների անգիր, ինչպես նաև կարող եք հնարավորություն տալ ինքնուրույն որոշել թեմաները և , վերջապես, որտեղ նստել. և ում հետ:

Կարողականության զգացում

«Իմ մոտ դա կստացվի, ես հասկանում եմ , ես կարողանում եմ»

Սովորելու ցանկության երրորդ կարևոր աղբյուրը իրավասության զգացումն է: Երեխան ցանկանում է ինչ-որ բան անել, եթե հավատում է, որ կարող է դա անել: Սովորելու համար նա պետք է հավատա, որ կարող է սովորել: Այդ իսկ պատճառով ուսուցիչը պետք է յուրաքանչյուր երեխայի հնարավորություն տա իրեն հաջողակ զգա:

Հաջողության հասկացությունը անհատական է, այն տարբեր է բոլորի համար: Սովորողներին պլանավորելու իրենց գործունեությունը և մարտահրավերներին հետևելու ուսուցումը կարող է օգնել նրանց հաջողությամբ հաղթահարել և իսկապես իրավասու զգալ:

Ուսումնական մոտիվացիայի ձևավորման գործում նշանակալի դեր են խաղում բանավոր ամրապնդումները և գնահատականները, որոնք բնութագրում են ուսանողի կրթական գործունեությունը: Օրինակ՝ հարցման ընթացքում գիտելիքների գնահատումը սովորողին տեղեկացնում է տվյալ իրավիճակում իր գիտելիքների վիճակի, հաջողությունների կամ ձախողումների մասին: Դասի գնահատման այս երկու ասպեկտներն էլ համարվում են գործողության շարժառիթ և այս առումով համարվում են խթանող ուժ: Բոլոր հետազոտողները գալիս են այն եզրակացության, որ այդ ազդեցությունները պետք է օգտագործվեն շատ ուշադիր, նրբանկատորեն՝ հաշվի առնելով տարիքը և անհատական առանձնահատկությունները, քանի որ դրանք ազդում են ոչ միայն կրթական գործունեության իրավիճակային դրդապատճառների վրա, այլև երկարատև օգտագործման դեպքում, և ձևավորել սովորողների ինքնագնահատականը և այլ անհատական հատկանիշներ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը սովորողի գլխավոր գործունեությունն է, և նրա հիմնական նպատակը գիտելիքների և կարողությունների հաջող յուրացումն է, որն անհրաժեշտ է, որպեսզի նա դրանք կիրառի հետագայում իր և հասարակության համար: Այդ պատճառով յուրաքանչյուր աշակերտի կարելի է գնահատել նրա համար, թե նա ինչպես է վերաբերում ուսուցմանը և ինչպիսիք են իր սեփական նպատակները և պլանները:

Ուսուցման շարժառիթի բարձր մակարդակը ուսուցման մեջ հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ պայման է և աշակերտի գործունեության ընդհանուր հաջողության շարժառիթը կարելի է դիտարկել սովորողի իմացական ունակությունների հետ:

Երբեմն, ավելի քիչ ընդունակ, բայց ուսուցման ավելի բարձր շարժառիթ ունեցող սովորողը կարող է ուսման մեջ ավելի բարձր արդյունքների հասնել, որովհետև ձգտում է ուսմանն ավելի շատ ժամանակ և ուշադրություն հատկացնել: Միևնույն ժամանակ, ոչ բավարար մոտիվացված սովորողի հաջողությունները կարող են աննշան լինել, նույնիսկ, չնայած նրա ունակություններին:

Ուսուցման շարժառիթը կարող է գործել նաև սովորողի հոգեկան բարեկեցության լավ ցուցանիշի դեպքում, ինչպես նաև զարգացման մակարդակի ցուցանիշի: Հաճախ, սովորողների ուսուցման շարժառիթը կարող է լինել շատ ցուցադրական: Ծնողների կողմից ստանալ ցանկալի նվերներ, գովասանք՝ ծնողներից, ցանկությունը դառնալ գերազանցիկ, առանձնաճանալ ընկերներից և այլն:

Դասավանդման իմ փորձից

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում բազմիցս իրականացրել ենք ինքնուրույն բնույթի աշխատանքներ՝ նպատակ ունենալով խթանել սովորողների ինքնուրույն մտածելու, գործելու կարողությունը: Նմանօրինակ դասերը հատկապես միջին օղակում բավականին արդյունավետ են, քանի որ նաև հնարավորություն են տալիս մեզ՝ ուսուցիչներին, հետադարձ կապի օգնությամբ մշտադիտարկել սովորողների առաջընթացը, դժվարություններն ու անհատական կարիքները: Բերենք նմանօրինակ աշխատանքներով ուղեկցվող դասի օրինակ:

Երկու առանձին դասեր ենք անցկացրել 7-րդ դասարանում, որտեղ սովորում են 35 աշակերտ: Առաջին դասն ամփոփման դաս էր և նպատակն էր համակարգել սովորողների գիտելիքները բնական թվերի հետ գործողություններ կատարելու առումով: Դասաժամի նպատակն էր նաև արձանագրել դասարանում սովորողների հետաքրքրվածության աստիճանը մաթեմատիկա առարկայով և դասի ժամանակ ներկայացվող նյութով: Հարկ է նշել, որ դասը պլանավորել էինք ավանդական եղանակով, սովորողների շրջանում որևէ առանձնակի ոգևորություն չնկատեցինք,

ուշադիր և ակտիվ էին հիմնականում այն աշակերտները, ում մոտ ստացվել էր առարկայի արդյունավետ յուրացումը, ով նախապատվություն ուներ մաթեմատիկայի հանդեպ:

Մեկ աշակերտ չափազանց պասիվ էր և չէր ցուցաբերում որևէ հետաքրքրություն ուսումնասիրվող թեմայի շուրջ, երկուսը դժվարությամբ էին համագործակցում և արձագանքում էին ուսուցչին միայն նրա անմիջական հարցից հետո: Դասը հիմնականում կառուցված էր հարցերի ու պատասխանների, գրատախտակի մոտ առաջադրանքների կատարմամբ, որի ընթացքում սովորողների մեծ մասն ուղղակի մեխանիկորեն արտագրում էր: Ավանդական մեթոդով իրականացված դասի ավարտին աշակերտներին առաջարկվեց լրացնել փոքր հարցաթերթ՝ մաթեմատիկա առարկայի հանդեպ հետաքրքրությունը պարզելու համար:

Հարցաթերթի օրինակ՝

- Միրո՞ւմ էք մաթեմատիկա առարկան:
- Ինչքանո՞վ է հետաքրքիր մաթեմատիկա առարկան:
- Ինչքանո՞վ էր հետաքրքիր այսօրվա դասը:
- Կցանկակայի՞ք մաթեմատիկայի դասաժամերը շատ լինեին:

Կարող ենք փաստել, որ հարցաթերթերի արդյունքներով սովորողների հետաքրքրության մակարդակը բավականին ցածր էր: Հաջորդ հետազոտական դասի ընթացքում աշակերտների հետաքրքրությունը խթանելու նպատակով կիրառեցինք մի շարք մեթոդներ և տեխնիկական հնարքներ, այդ թվում՝ ինքնուրույն և խմբային աշխատանքներ: Մասնավորապես, նոր նյութի բացատրման ժամանակ աշակերտներին առաջարկվեց ինքնուրույն կարդալ դասի տեսական մասը և դասընկերոջը բացատրել այն, ինչ ինքն է հասկացել դասից: Ջուզահեռ սովորողները ստացան տեքստային խնդիրներով քարտեր: Այն սովորողները, ովքեր դժվարացան ինքնուրույն աշխատել, հնարավորություն ստացան աշխատել զույգերով

Սովորողները, ովքեր աշխատեցին զույգերով, հնարավորություն ստացան համագործակցել, միասին քննարկել խնդիրը, գտնել լուծման հնարավոր եղանակները: Իրականացվեց նաև աշխատանք շարքերով: Ըստ էության՝ սովորողներն աշխատում էին ինքնուրույն, սակայն վաստակած միավորը տրվում էր շարքին: Այսպես մեծանում էր սովորողների մոտիվացիան, աշխատանքը հաջողությամբ կատարելու ցանկությունը: Այսպիսով, դասարանում ստեղծվեց ընդհանուր համագործակցային մթնոլորտ և առողջ մրցակցային պայմաններ զույգերի միջև: Առաջադրանքը կատարելուց հետո յուրաքանչյուր զույգ հանդես եկավ իր կատարած աշխատանքով և պատասխանեց ուսուցչի ուղղորդիչ հարցերին: Այս դասի ընթացքում նկատվեց աշակերտների զգալի ակտիվությունը և ձգտումը առավել արդյունավետ կերպով կատարել առաջադրանքները: Նաև այս պայմաններում կարևոր էր ուսուցչի ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսում, ով հայտորոշիչ և ուղղորդիչ հարցադրումներով ակտիվացնում էր աշակերտներին, խթանելով նրանց կողմից առավել մեծ հետաքրքրություն առարկայի հանդեպ, քան նախկինում էր:

Այսպիսով, երկրորդ հետազոտական դասի արդյունքում սովորողները մեծամասամբ մասնակցում էին դասապրոցեսին, կատարում էին առաջադրանքներն ինքնուրույն, զույգերով, խմբերով: Այս պարագայում առավել թույլ և չկողմնորոշվող սովորողները հնարավորություն ունեցան զույգեր կազմել առավել բարձր առաջադիմություն ունեցող դասընկերների հետ՝ արդյունավետ համագործակցության համար: Դասի ավարտին սովորողներին բաժանվեցին նույն հարցաթերթը և ստացված արդյունքները բավականին գոհացուցիչ էին, քանի որ պատկերը զգալի կերպով փոխվել էր, սովորողների հետաքրքրվածությունը առավել բարձր էր:

Սա թույլ է տալիս խոսել այն մասին, որ նորարական մեթոդների կիրառումը դասի ժամանակ, ինքնուրույն, զույգերով աշխատանքի խթանումը, առաջադրանքների լուծման հետաքրքիր տարբերակների ներկայացումը, ինչպես նաև մաթեմատիկա առարկայի կապակցումը իրական կյանքի դրվագների, իրական փորձի հետ թույլ է տալիս զգալի կերպով աշակերտների մեջ հետաքրքրություն սերմանել

մաթեմատիկայի հանդեպ: Քանի որ այսպիսի գործնական աշխատանքների ընթացքում աշակերտները աստիճանաբար հասկանում են, որ այս առարկան սերտորեն կապված է իրենց շրջպատի հետ, մաթեմատիկական տարրական գիտելիքները անհրաժեշտ են մարդուն յուրաքանչյուր քայլափոխին:

Հետազոտության մեթոդները, կազմակերպումն ու ընթացքը

Թեմայի շրջանակներում հետազոտությունը կատարելու նպատակով մենք պարզել ենք հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ինչպես նաև հստակեցրել ենք տեսական և մեթոդաբանական այն հիմքերը, որոնք մեզ հնարավորություն են ընձեռնում ճիշտ կողմնորոշվելու մեթոդների ընտրության գործում:

Որպես փորձարարական հետազոտության մեթոդներ կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝

1. Դիտում
2. Էլերսի «Ուսումնական գործունեությանը միտված անձի ախտորոշում» մեթոդը
3. Էլերսի «Անհաջողություններից խուսափման մոտիվացիա»
4. Լեպեշեվոյի «Ուսումնական մոտիվացիայի տեսակի ախտորոշում»
5. Բոժովիչի և Մարկովի «Դրդապատճառների աստիճան» մեթոդիկան


Հետազոտության արդյունքների վերլուծությունը

Յուրաքանչյուր մեթոդիկայի բովանդակությունը վերլուծությունը ստորև կներկայացվի:

Աշակերտների կրթական մոտիվացիայի դիագնոստիկ մեթոդը (Ա. Ա. Ռեան և Վ. Ա. Յակունին) ներառում է կրթական դրդապատճառներ՝ հաղորդակցական, խուսափողականություն, հեղինակություն, մասնագիտական, ստեղծագործական


ինքնաիրացում, կրթական և ճանաչողական, սոցիալական դրդապատճառներ: Թեստի նպատակն է աշակերտների կրթական մոտիվացիայի ախտորոշումը: Տեխնիկան մշակվել է Ա. Ա. Ռեանի և Վ. Ա. Յակունինի- ի հարցաշարի հիման վրա: Վերոնշյալ հարցաշարի 16 դատողություններին ավելացան ուսման դրդապատճառները բնութագրող դատողություններ, ընդգծված Վ.Գ. Լեոնտևի կողմից, ինչպես նաև ուսման դրդապատճառները բնութագրող դատողությունները, որոնք ստացել է Ն.Տ. Բադմանան աշակերտների և դպրոցականների շրջանում անցկացված հարցման արդյունքում: Սրանք հաղորդակցական, մասնագիտական, կրթական և ճանաչողական, սոցիալական լայն դրդապատճառներ են, ինչպես նաև ստեղծագործական ինքնաիրացման, ձախողումից և հեղինակությունից խուսափելու շարժառիթներ:

1. Հաղորդակցական շարժառիթներ
2. Խուսափելու դրդապատճառներ
3. Հեղինակության դրդապատճառներ
4. Մասնագիտական դրդապատճառներ
5. Ստեղծագործական ինքնաիրացման դրդապատճառներ
6. Կրթական և ճանաչողական շարժառիթները
7. Սոցիալական դրդապատճառներ



Ինչպես տեսնում ենք առավելագույնը հեղինակության դրդապատճառներն են, նվազագույնը խուսափելու դրդապատճառները:

«Մոտիվների սանդուղք» ուսուցման դրդապատճառների տիպաբանության (Ա.Ի. Բոժովիչ, Ի.Կ. Մարկովա) համաձայն աշակերտներին հրահանգավորել ենք կառուցել սանդուղք, որը կոչվում է «Ինչու եմ սովորում»: Բայց մեզ հետաքրքրում էր ոչ թե այն, ինչի համար բոլորը սովորում են, այլ այն, ինչ իրենք են սովորում, որն է նրանց համար ամենակարևորը:



	Տղաներ	Աղջիկներ
Սոցիալական շարժառիթներ	58%	30%
Ճանաչողական շարժառիթներ	42%	70%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ելնելով մեր առաջադրած նպատակից և հիմնական հետազոտության վարկածից՝ հանգել եմ հետևյալ եզրակացությունների, որ հետաքրքրության խթանումը մաթեմատիկա առարկայի հանդեպ բավականին բարդ գործընթաց է, քանի որ այն պայմանավորված է ոչ միայն մանկավարժական գործընթացով, այլև սովորողի անձնային հատկություններով և հակումներով տվյալ առարկայի հանդեպ: Յուրաքանչյուր սովորող չէ, որ կարող է արդյունավետ վերջնարդյունքի հասնել մաթեմատիկայի ոլորտում:

Մակայն, միևնույն ժամանակ, պետք է հիշել, որ տարրական մաթեմատիկական գիտելիքները անհրաժեշտ են մարդուն նաև առօրյա կյանքում: Մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրության խթանումը մանկավարժական կարևոր խնդիրներից է, որը գտնվում է ուսուցիչների ուշադրության կենտրոնում:

Այս գործընթացը անհրաժեշտ է իրականացնել նորարարական մեթոդների կիրառմամբ, քանի որ ավանդական մեթոդները, որպես կանոն, չեն արդարացնում իրենց այն սովորողների պարագայում, ում մոտ զգացվում է ուշադրության և հետաքրքրվածության պակաս այս առարկայի նկատմամբ՝ ելնելով դրա առանձնահատկություններից: Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում դիտարկվել է այս խնդրի լուծման նոր մոտեցում, որը կայանում է նորարարական մեթոդների կիրառման մեջ:

Մասնավորապես, հետազոտական աշխատանքի ընթացքում գործածվել են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են համագործակցությունը դասի ընթացքում ուսուցիչ- սովորող և սովորող-սովորող ձևաչափով, ինչպես նաև գործնական աշխատանքների լայն կիրառությունը ինքնուրույն աշխատանքի կամ զույգերի համագործակցության պայմաններում: Նշված մեթոդների կիրառությունը զգալի դրական արդյունքներ է

սովել հետազոտական դասերի ընթացքում՝ բավականին մեծ հետաքրքրություն խթանելով սովորողների մոտ:

Տեսական և փորձարարական հետազոտության տվյալների մշակմամբ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ.

- Ուսումնական գործունեությունը բարդ և երկարատև գործընթաց է, որտեղ ներգրավվում են բազմաթիվ դրդապատճառներ և մեր առաջադրված վարկածը, որի համաձայն ենթադրվում էր, որ աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է շարժառիթի տեսակով հաստատվեց:
- Նրանից, թե ինչպիսի ուսումնական դրդապատճառներ կգերիշխեն աշակերտի մոտ կախված է նրա ուսուցման և անձնավորության զարգացման արդյունավետությունը:
- Այն դրդապատճառները, որոնք նպաստում են ուսումնական աշխատանքի մեջ աշակերտների ներգրավմանը միասնական դասակարգում չկա: Մի դեպքում կարելի է առանձնացնել ուսման ներքին և արտաքին դրդապատճառներ:
- Ուժեղ իրական դրդապատճառ է գնահատականը: Բացի գնահատականից իրական դրդապատճառ է նաև խրախուսանքը, գովեստը և պարգևատրումը:
- Իմացական դրդապատճառները, հետաքրքրությունները ուղղված են դեպի ուսումնական գործունեության բովանդակությունը: Դրանք ամբողջությամբ համապատասխանում են ուսումնական խնդիրներին և այդ պատճառով հենց իմացական դրդապատճառների զարգացմանը պետք է հիմնական ուշադրությունը դարձնել ուսուցման բոլոր փուլերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Казанская В.Г. Подросток. Трудности взросления.: М., 2008.- 288 с.
2. Крайг Г., Бокум Д. Психология развития.: СПб.: Питер, 2011. -940 с.
3. Немов Р. С. Психология в 3 книгах, кн. 2, М., 2007.- 218 с.
4. <http://vmeste-rastem.ru/> -5.09.2023թ.
5. <http://www.med-practic.com/arm/>-5.09.2023թ.
6. http://school88.ru/content/psihology/D_Motiv.htm- 23.08.2023թ.
7. <http://psylist.net/praktikum/23.htm>- 15.08.2023թ.